ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2017 թ. N ____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 501-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման ծրագիրը հաստատելու մասին» N 501-Ն որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի մարտի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
2.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
3.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
4.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2017 թ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 501-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

Սույն որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է Արցախի Հանրապետության շրջաններում ծխախոտային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման և դրա արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամտաբերության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ, որի իրականացման համար նախատեսվում է ծխախոտի մշակությամբ զբաղվողներին ջրախնայողական տեխնոլոգիաներ տեղադրելու նպատակով ֆինանսական միջոցներ տրամադրել 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության տեսքով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Որոշման նախագծի խնդիրներն են ծխախոտային մշակաբույսերի ցանքատարածությունների կաթիլային համակարգով ոռոգմանն անցնելուն աջակցելը, ծխախոտային մշակաբույսերի ցանքատարածքների ավելացումը և բերքատվության բարձրացումը, ոռոգման ջրի ու ծխախոտի մշակության տակ գտնվող ոռոգելի հողատարածքների արդյունավետ օգտագործման ապահովման նպատակով ոռոգման գործընթացի ճիշտ կազմակերպումը, ջրման նոր տեխնոլոգիաների ներդրումը և ավտոմատ կառավարման համակարգերի ստեղծումը:

Նպատակը և բնույթը

Ծրագրով նախատեսվում է աջակցել ծխախոտային մշակաբույսերի արտադրությունում ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրմանը, որի արդյունքում կապահովվի ջրային ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործումը, նվազ ջրային ռեսուրսների պայմաններում ծխախոտի տակ մշակվող ոռոգովի հողատարածքների ավելացումը, ծխախոտի արտադրությամբ զբաղվողների եկամտաբերության բարձրացումը:

Ակնկալվող արդյունքը

Ծրագրի իրականացումից ակնկալվում է Արցախի Հանրապետությունում ծխախոտային մշակաբույսերի ցանքատարածությունների, ծխախոտի բերքատվության ավելացում, ծխախոտի արտադրության եկամտաբերության և ստացվող բերքի որակի բարձրացում, մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազում:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչության, ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի և իրավաբանական բաժինների կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 501-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 501-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 501-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 501-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 501-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 501-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 501-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 501-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն
4. ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
5. ԱՀ շրջանների վարչակազմեր

Նախագիծը պատրաստողը՝

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչություն

_____ ***Ա. Ներսիսյան***

(ստորագրությունը)

«____» _____ 2017 թ.